ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ԳԻՐԸ ՄԵԾԱՀՌՉԱԿ ԿԻՆՈԲԵՄԱԴՐԻՉ ԱՆՐԻ ՎԵՌՆՈՅԻ (ԱՇՈՏ ՄԱԼԱՔՅԱՆ) ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

ՏԻԱՐ ԱՇՈՏ ՄԱԼԱՔՅԱՆԻ՝ ԱՆՐԻ ՎԵՌՆՈՅԻ ՍԳԱԿԻՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Մեծ ցավով տեղեկացանք մեր ժողովրդի և Առաքելական Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ, մեծահռչակ արվեստագետ, կինոռեժիսոր Աշոտ Մալաքյանի՝ աշխարհահռչակ Անրի Վեռնոյի մահվան մասին:

Հանուն Ամենայն Հայոց Կաթողիկոսության և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության Մեր խորին ցավակցությունն ենք հղում Ձեզ և հանգուցյալի բոլոր հարազատներին, արվեստագետ գործընկերներին ու մերձավորներին:

Մեր Եկեղեցին, աշխարհասփյուռ հայությունը խոնարհումով է հրաժեշտ տալիս հայազգի տաղանդավոր արվեստագետին, որ ապրեց ու գործեց հոգում միշտ կրելով Հայրենիքի սերը և հարազատ ժողովրդի արժեքները: Ֆրանսիայի հյուրընկալ հարկի ներքո ծաղկեցին ու պտուղ տվեցին Անրի Վեռնոյի հոգու շնորհները՝ բացահայտելով հայ ժողովրդի կենսահաստատ ուժը, բարիով, արդարության ու ճշմարտության հաղթանակի հավատով չարը մերժելու քրիստոսասեր կամքը, որի մեծագույն արտահայտությունն է նրա «Մայրիկ» ֆիլմը՝ իր համամարդկային հնչողությամբ Հայոց եղեռնի մասին դեռևս չգերազանցված ստեղծագործություն:

Սիրով ու հուզումով ենք միշտ հիշելու լուսահոգի Անրի Վեռնոյին, որին իբրև հավատավոր, կենսուրախ ու պայծառ մեծ հայորդու ճանաչեցինք Հովվապետական Մեր այցի ընթացքին Լիոն քաղաքում:

Աղոթում ենք, որ Ողորմածն Աստված Իր երկնային երանավետ բարձունքներում խաղաղության մեջ ընդունի Անրի Վեռնոյի երանյալ հոգին, Սուրբ Հոգու շնորհով մխիթարություն պարգևի Ձեզ բոլորիդ և օրհնությամբ առաջնորդի Ձեր կյանքի ընթացքը:

Աղոթք, խունկ և օրհնություն Անրի Վեռնոյի անթառամ հիշատակին, հարգանք և խոնարհում նրա պայծառ անվանը:

Վշտակից սիրով և օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
12 հունվարի 2002 թ.